ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2022 թվականի N 245-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1038-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ողջաբերդ բնակավայրի սողանքային գոտում գտնվող 4-րդ և 5-րդ կարգի վնասվածության աստիճան ունեցող թվով 15 բնակելի տների բնակիչներին բնակարանի գնման վկայագրի *(այսուհետ՝ վկայագիր)* միջոցով բնակարան *(բնակելի տուն)* գնելու համար ֆինանսական աջակցության տրամադրման աշխատանքների կազմակերպումն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով *(այսուհետ՝ հանձնաժողով)* հետևյալ կազմով.

1) ***Հրաչյա Վարդանյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ,

2) ***Սոս Ղուշչյան*** - հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ,

3) ***Գուրգեն Ավետիսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ,

4) ***Մանվել Պետրոսյան*** - անձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ,

5) ***Էմմա Գևորգյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետ,

6) ***Ստեփան Բաղդասարյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական:

2. Սահմանել հանձնաժողովի գործառույթները՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1038-Ն որոշման կատարման վերաբերյալ ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի օգոստոսի 02
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի օգոստոսի 02-ի N 245-Ա որոշման

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) վկայագրի միջոցով աջակցություն ստանալու մասին բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառված անձանց ուղղված ծանուցումների գրանցումը.

2) վկայագրի միջոցով աջակցություն ստանալու մասին անձանց կողմից ընդունված որոշումների գրանցումը.

3) վկայագրի միջոցով աջակցություն ստանալու մասին ներկայացված դիմումներին կից փաստաթղթերի ուսումնասիրությունը.

4) վկայագրի միջոցով աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակների կազմումը.

5) վկայագրերի միջոցով աջակցություն ստացող անձանց ցուցակի հաստատման մասին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի որոշման նախագծի նախապատրաստումը.

6) վկայագրի միջոցով գնվող բնակարանի (բնակելի տան) ընտրված տարբերակը մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու մասին եզրակացությունների տրամադրումը և դրանց գրանցումը: